

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1) Արշակ Արայեան. ՍԻՐՈՑ ՀՈՎԻՏԸ. ԹԻՓԼԻՍ, 1904. էջ. 16:

«Միրոյ հովիտը» սկսուած է հետեւեալ տողերով. — «Աննա երջանկութիւնը, այն, որին ձգտուած են հասնել ամենքը, բայց շատ քչերը միայն չեն փակում իրանց աչքերը ծիածանագոյն սանդուղքի առաջ՝ նրա երփներանգ փայլից սարսափած»¹: Եթէ ընթերցողը բան հասկացաւ այս նախադասութիւնից, այնպէս էլ կհասկանայ ամբողջ գրքոյկը կարգալով. պէտք է գնալ հեղինակի մօտ, որ նա բացատրէ թէ ինչ է նըշանակուած «ծիածանագոյն սանդուղք», որի «երփներանգ փայլից սարսափած» պէտք է աչքերը փակել: Ինչպէս երևում է պ. Ա. Թայեանը դեկադենտական վաղանցուկ փառքի հովերին է ենթարկուել. նրա համար գոյութիւն ունին «ձգտող սարալանջեր» (էջ 5), «արևելքի արեւուզիշեր ծովծով՝ աչքեր» (էջ 6), «հոգու խննթ հուր» (էջ 6), «ստրուկ հառաչանք» (էջ 9), «սեւ ստրուկ-իշխան» (էջ 9) և այլն:

Ա. Թայեանն ասում է. — դու ինձ սիրում ես բոլոր զօրութեամբ, իսկ ես քեզ զօրութիւնից էլ անելի (?). դու հարբած ես սիրով, իսկ ես աւելի — ես ահուգողի մէջ եմ նրա համար...» (էջ 13—14). երբ լսողն առարկում է թէ «չեմ հասկանում» (էջ 14), հեղինակը կտրուկ կերպով պատասխանում է «Տայ Աստուած, որ երբէք չհասկանաս» (էջ 14): Երկիւղ կրելով, որ հեղինակը մեզ էլ նոյն բարեմաղթութիւնը չանէ, չենք ասում թէ՛ «սիրոյ հովտից» ոչինչ չենք հասկանում և վերջակէտ ենք դնում:

2). Ձեռամբ. Սիրոյ գոհեր պօէմա ամբարանոցային կեանքից. էջ 16 Բագու 1904.

Պ. Շերամը մեր կեանքում պատահող տխուր դէպքերից մէկըն է իւր «պօէմայի» նիւթ դարձրել. մի երիտասարդ կեղծ ու պատիր յոյսերով խաբելով մի անմեղ օրիորդի-անյայտանում է.

օրիորդը զաւակ է ունենում և խայտառակութիւնից ազատուելու համար գետն է ձգում մանկանը. բայց շուտով ինքն էլ խղճի խայթից տանջուելով՝ նոյն գետի ալիքներին է զոհ գնում: Ահա այս ողբերգական փոքրիկ զրոյցն է «Սիրոյ զոհերի» պարունակութիւնը, որ հեղինակը արձակ գրելու փոխարէն ստանաւորով է շողկապել և անունը դրել «պօէմա»: Երևի պ. Շերամն էլ այն կարծիքի է, որ եթէ ամենասովորական մտքին էլ փոխանակ կանոնաւոր և ընդարձակ նախադասութիւններով արտայայտելու՝ երկար աշխատանք գործ դնելով ու արուեստական կերպով նման յանգերով վերջացնեն՝ գրուածքը կլինի բանաստեղծութիւն և գրողն էլ բանաստեղծ... Սակայն չափը պահպանելու համար երկար մտածելու էլ կարիք չկայ, կարելի է բառերը ծոռել և պակասը լրացնել. օրինակ. «Հալաւի տակից հասունակ (?) կուրծքը» (էջ 6) «կատարեալ հօրը (?) դէմքի գծերը» (էջ 10) «եւ իւր կեղծ սիրոյ մանուկ մեխակը» (?) (էջ 10) «Ամբողջ մարմնով զրո զրո (?) զողում էր» (էջ 11). «նա նոյն պատկերը միշտ տեսանում» (?) էր» (էջ) 13 և այլն:

3). Մեյք. Եսայեան. Մի տւրյի... պատկեր Թալխանու կիանրից. Թիֆլիս 1905. էջ 14:

Բազուի իրականութեան մի հատուածի պարզ ու անպաճոյճ պատկերն է «մի ըուրլին»¹. նկարագրուած է նախաշին գործարանի կառավարչի յարաբերութիւնը իւր գործակատարի և բանուորների հետ: Այժմ այսպիսի վերաբերմունքը կարելի է անցած-գնացած օրերին վերագրել. ամբողջ Ռուսաստանի բանուորական շարժումը գործարանների կառավարիչներին ստիպեց աւելի մարդավայել ու քաղաքավարի վերաբերուել իրենց նման մարդ արարածներին: Քմահաճոյքն ու չարամտութիւնն այժմ առաջուայ դերը չեն կարող խաղալ. օրէնք և արդարութիւն պահանջելն ամեն մի անհատի անկապտելի իրաւունքն է...

Գրքոյրը կարդացուած է անանց ձանձրոյթի, սակայն հեղինակը գրուածքը խճողել է բազմաթիւ օտար բառերով, որ բոլորովին աւելորդ բեռն է. օրինակ «բաբոչիներ», «տաբեր», «պրոմըսի պրիկաշչիկ», «դագաւոր». «աստանօվկա», «դաւէրնի», «բաղի խրիստա», «րեկամենդացիա», «սկաժիւնա». «տրուբաներ», «ժեւոնկա», «սերիօզնի», «կնիժկա», «բասչոտ» ևւ այլն.